

ղաքն Բաղդատ յետ առնուլ յՕսմանցւոց, զոր եւ էառ յետ սակաւ աւուրց<sup>2</sup>», որ ուղիղ չէ: Մովսէս ներկայացաւ Շահին (1626) եւ հարցաքննուեցաւ մոմը սպիտակացնելու արուեստի մասին:

Շահէն հրաման ընդունեցաւ Մովսէս, որ Սպահանի մէջ երեք պարսկի մոմ սպիտակացնելու արուեստը սորվեցնէ: Ութը ամսէն ի գլուխ հանելով հրամանը, իւր աշակերտներու հետ Շահին դնաց, որ ի Փահրապատ կը ձմերէր: Հոն էր Զուղայեցի Սօջայ Նազարը, «մեծ եւ փառաւոր իշխանը» եւ Մովսէս եպիսկոպոսի վաղեմի մտերիմ բարեկամը: Նա յանձն առաւ ներկայացնել Շահին Մովսէս եպիսկոպոսը, սպիտակացուցած մոմերն եւ յիշեալ երեք ծառաները, որոնք սորված էին արուեստը: Շահը շատ գոհ մնաց: Եւ որովհետեւ այն օրերուն հանդիպեցաւ Յայտնութեան տօնը (6 Յունուար 1627), խորհրդով խոնայ Նազարին կատարեց օրուան հանդէսը մեծ տօնախմբութեամբ, որուն ներկայ էր նաեւ Շահը: Ղուկաս Գառնեցի կը գրէ. «Ի ջրօրհնէն ինքն իսկ արքայ մեծամեծովք իւրովք եկաց ի վերայ ջրոյն. եւ շնորհօք սրբալոյս Մեռոնին հարեալ արքայն յարտասուս առաջի սուրբ հօրս»:

<sup>2</sup> Բաղդատ Պարսից ձեռքն էր, զոր 1625 Յունիսին եկան պաշարեցին թուրքերը. Շահ Արաս հասած էր պաշարուածներուն օգնութեան 1627 Յունուարին. պաշարումը լքեցին եւ հեռացան թուրքերը 1627 Յունիսին. հմմտ. Hammer, III, էջ 43—54: Մովսէս ի Դուռն հասաւ հաւանօրէն 1626, Մայիսին: